# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2014թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում

(վերլուծություն)

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 155812 գործարք, որոնց քանակը, 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 13.2 %-ով:

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 38158 օտարման գործարքների 75.0 %-ը կազմել է առուվաճառքը, 24.5 %-ը՝ նվիրատվությունը և 0.5 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման

գործարքների 41.3 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 39.4 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 8.4 %-ով: 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 11692 առուվաճառքի գործարքների 63.2 %-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 15.1 %-ով:

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | |
|---|---|---|
| | 9 ամիս 2013թ. | 9 ամիս 2014թ. |
| Կենտրոն | 426700 | 428000 |
| Արաբկիր | 354600 | 356600 |
| Քանաքեռ-Զեյթուն | 281600 | 282700 |
| Նոր-Նորք | 249100 | 252400 |
| Ավան | 257900 | 260200 |
| Էրեբունի | 247600 | 250700 |
| Շենգավիթ | 253400 | 256200 |
| Դավթաշեն | 273000 | 275200 |
| Աջափնյակ | 245900 | 249500 |
| Մալաթիա-Սեբաստիա | 238700 | 242100 |
| Նուբարաշեն | 150100 | 155500 |
| Միջինը Երևանում | *270800* | *273600* |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 1.0 %-ով:

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 3413 բնակարան, որոնց քանակը 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 3.9 %-ով:

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | |
|---|---|---|---|
| | | 9 ամիս 2013թ. | 9 ամիս 2014թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 114600 | 115800 |
| | Ապարան | 55800 | 57400 |
| | Թալին | 63700 | 65600 |
| Արարատ | Արտաշատ | 94700 | 96100 |
| | Մասիս | 114300 | 115300 |
| | Վեդի | 99200 | 100500 |
| | Արարատ | 75100 | 75400 |
| Արմավիր | Վաղարշապատ | 153900 | 154150 |
| | Արմավիր | 120700 | 121200 |
| | Մեծամոր | 87300 | 87500 |
| Գեղարքունիք | Սևան | 99100 | 99200 |
| | Գավառ | 58900 | 59800 |
| | Մարտունի | 107600 | 107650 |
| | Վարդենիս | 43800 | 44800 |
| | Ճամբարակ | 27500 | 28700 |
| Լոռի | Վանաձոր | 88200 | 88400 |
| | Ստեփանավան | 74500 | 74500 |
| | Սպիտակ | 99800 | 99800 |
| | Ալավերդի | 54900 | 55000 |
| | Տաշիր | 46200 | 47300 |
| | Թումանյան | 11000 | 11000 |
| | Շամլուղ | 8000 | 8000 |
| | Ախթալա | 20000 | 20200 |
| Կոտայք | Աբովյան | 154400 | 155100 |
| | Նոր Հաճն | 128500 | 128600 |
| | Բյուրեղավան | 107900 | 108150 |
| | Եղվարդ | 109300 | 109400 |
| | Հրազդան | 63500 | 63800 |
| | Ծաղկաձոր | 292500 | 292500 |
| | Չարենցավան | 85300 | 85500 |
| Շիրակ | Գյումրի | 109300 | 109300 |
| | Արթիկ | 66400 | 66700 |
| | Մարալիկ | 40100 | 40700 |
| Սյունիք | Գորիս | 120200 | 122100 |
| | Կապան | 91700 | 92600 |
| | Սիսիան | 90500 | 91150 |
| | Մեղրի | 79100 | 80900 |
| | Ագարակ | 45700 | 46900 |
| | Քաջարան | 94400 | 94650 |
| | Դաստակերտ | 8000 | 8000 |
| Վայոց ձոր | Վայք | 94100 | 95000 |
| | Եղեգնաձոր | 122500 | 125300 |
| | Ջերմուկ | 111600 | 112800 |
| Տավուշ | Դիլիջան | 111900 | 113200 |
| | Իջևան | 117800 | 118300 |
| | Բերդ | 59400 | 60200 |
| | Նոյեմբերյան | 48500 | 49900 |
| | Այրում | 30800 | 31850 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 0.8 %-ով:

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 3796 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 1011, մարզերում՝ 2785: 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 4.3 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 2.2 %-ով, իսկ մարզերում ՝ 5.1 %-ով:

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ$^2$ և տնամերձի 400.0 մ$^2$ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ$^2$ մակերեսով(ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | |
|---|---|---|
| | 9 ամիս 2013թ. | 9 ամիս 2014թ. |
| **Կենտրոն** | 475000 | 476100 |
| **Արաբկիր** | 381900 | 383000 |
| **Քանաքեռ-Զեյթուն** | 294100 | 295000 |
| **Նորք-Մարաշ** | 318100 | 319200 |
| **Ավան** | 269800 | 270500 |
| **Էրեբունի** | 238600 | 239600 |
| **Շենգավիթ** | 254200 | 255000 |
| **Դավթաշեն** | 275100 | 276000 |
| **Աջափնյակ** | 248900 | 250050 |
| **Մալաթիա-Սեբաստիա** | 237200 | 238000 |
| **Նուբարաշեն** | 149800 | 150700 |
| **Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)** | ***285700*** | ***286700*** |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1 մ$^2$ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 0.4 %-ով:

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ$^2$ և տնամերձի 1000.0 մ$^2$ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ$^2$ մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | |
|---|---|---|---|
| | | 9 ամիս 2013թ. | 9 ամիս 2014թ. |

| | | | |
|---|---|---|---|
| Արագածոտն | Աշտարակ | 136000 | 136200 |
| | Ապարան | 59700 | 60050 |
| | Թալին | 69000 | 69250 |
| Արարատ | Արտաշատ | 99700 | 100000 |
| | Մասիս | 114900 | 115100 |
| | Վեդի | 102000 | 102300 |
| | Արարատ | 88000 | 88000 |
| Արմավիր | Վաղարշապատ | 152900 | 153100 |
| | Արմավիր | 106900 | 107000 |
| Գեղարքունիք | Սևան | 94700 | 94800 |
| | Գավառ | 57100 | 57100 |
| | Մարտունի | 95700 | 96100 |
| | Վարդենիս | 40500 | 41000 |
| | Ճամբարակ | 30700 | 31100 |
| Լոռի | Վանաձոր | 99800 | 100000 |
| | Ստեփանավան | 89700 | 90000 |
| | Սպիտակ | 113900 | 114000 |
| | Ալավերդի | 49500 | 50200 |
| | Տաշիր | 51900 | 51900 |
| | Թումանյան | 12000 | 12000 |
| | Շամլուղ | 13800 | 14000 |
| | Ախթալա | 29900 | 30000 |
| Կոտայք | Աբովյան | 156200 | 157000 |
| | Նոր Հաճն | 129800 | 129800 |
| | Բյուրեղավան | 120400 | 120500 |
| | Եղվարդ | 116100 | 116100 |
| | Հրազդան | 82500 | 82600 |
| | Ծաղկաձոր | 305000 | 305000 |
| | Չարենցավան | 82900 | 83000 |
| Շիրակ | Գյումրի | 118400 | 118500 |
| | Արթիկ | 63100 | 63100 |
| | Մարալիկ | 51900 | 52000 |
| Սյունիք | Գորիս | 129800 | 130000 |
| | Կապան | 99700 | 100000 |
| | Սիսիան | 95700 | 96500 |
| | Մեղրի | 84100 | 84500 |
| | Ագարակ | 46900 | 46900 |
| | Դաստակերտ | 11600 | 11610 |
| Վայոց ձոր | Վայք | 89700 | 90050 |
| | Եղեգնաձոր | 116600 | 116600 |
| | Ջերմուկ | 130700 | 131300 |
| Տավուշ | Դիլիջան | 112300 | 113000 |
| | Իջևան | 122700 | 123200 |
| | Բերդ | 59700 | 60100 |
| | Նոյեմբերյան | 47700 | 48300 |
| | Այրում | 35700 | 36250 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1 մ$^{2}$ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 0.3 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել է 12217 միավոր (6586.70 հա) հող, որից Երևանում՝ 1132 միավոր (160.79 հա)։ Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 6501 միավոր (4987.63 հա), որից Երևանում՝ 55 միավոր (18.11 հա),

բնակելի կառուցապատման հողեր՝ 3693 միավոր (311.78 հա), որից Երևանում՝ 535 միավոր (28.57 հա),

հասարակական կառուցապատման հողեր՝ 1378 միավոր (170.96 հա), որից Երևանում՝ 497 միավոր (108.89 հա),

արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 161 միավոր (71.18 հա), որից Երևանում՝ 45 միավոր (5.22 հա),

առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 52 միավոր (72.75 հա),

հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 430 միավոր (966.23 հա),

ջրային հողեր՝ 1 միավոր (5.17 հա).

անտառային հողեր՝ 1 միավոր (1.00 հա) ընդհանուր մակերեսով։

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 10220 միավորի (5870.25 հա) նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 956 միավոր (142.16 հա), նվիրատվության գործարքներ՝ 1945 միավոր (700.86 հա), որից Երևանում՝ 162 միավոր (17.92 հա) և փոխանակության գործարքներ՝ 52 միավոր (15.59 հա), որից Երևանում՝ 14 միավոր (0.71 հա)։

Հանրապետությունում 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2013թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 10.9 %-ով։ Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 15.6 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 2.6 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 24.6 %-ով։ Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Սյունիքի մարզում՝ 1178.91 հա, որից 204.99 հա գյուղատնտեսական նշանակության են։

Վաճառված հողերի քանակի 24.6 %-ը կամ 2512 միավորը (755.36 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 411 միավոր (15.46 հա), իսկ 74.5 %-ը կամ 7611 միավորը (4151.91 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 539 միավոր (126.16 հա)։ 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 97 գործարք (962.97 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները։

Ստորև ներկայացվում է 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային, անտառային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները։

| | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղ. նշա-նակության հողեր | | Արդյունա-բերական օբյեկտների հողեր | | Գյուղ. նշա-նակության հողեր | | | | Արդյունա-բերական օբյեկտների հողեր | | Գյուղ. նշա-նակության հողեր | | Արդյունա-բերական օբյեկտների հողեր | | | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 0 | 0.00 | 24 | 1.58 | 167 | 4.93 | 220 | 8.94 | 42 | 14.95 | 18 | 3.32 | 268 | 13.86 | 211 | 94.02 |
| Արագածոտն | 82 | 73.78 | 5 | 0.38 | 8 | 0.90 | 43 | 3.90 | 470 | 358.76 | 0 | 0.00 | 205 | 22.83 | 20 | 1.15 |
| Արարատ | 72 | 150.07 | 9 | 19.80 | 171 | 8.33 | 56 | 1.75 | 724 | 335.69 | 9 | 9.21 | 384 | 33.95 | 37 | 0.78 |
| Արմավիր | 29 | 29.79 | 5 | 3.37 | 13 | 0.97 | 28 | 1.05 | 724 | 920.61 | 3 | 0.14 | 400 | 39.74 | 25 | 1.64 |
| Գեղարքունիք | 22 | 34.36 | 10 | 10.22 | 59 | 3.68 | 94 | 5.08 | 152 | 140.74 | 5 | 0.34 | 137 | 16.96 | 12 | 1.94 |
| Լոռի | 14 | 5.28 | 7 | 4.84 | 57 | 1.85 | 63 | 4.72 | 1271 | 955.42 | 5 | 1.87 | 86 | 8.72 | 20 | 0.44 |
| Կոտայք | 154 | 187.93 | 5 | 0.64 | 191 | 11.75 | 113 | 2.69 | 694 | 433.09 | 4 | 1.92 | 518 | 43.44 | 83 | 10.90 |
| Շիրակ | 6 | 6.02 | 3 | 1.05 | 43 | 0.52 | 14 | 0.73 | 317 | 356.75 | 3 | 1.61 | 104 | 11.58 | 23 | 0.72 |
| Սյունիք | 25 | 60.52 | 13 | 4.74 | 12 | 0.99 | 16 | 3.04 | 146 | 144.47 | 0 | 0.00 | 40 | 3.85 | 15 | 0.36 |
| Վայոց ձոր | 62 | 50.41 | 3 | 1.68 | 12 | 0.67 | 11 | 0.67 | 100 | 37.26 | 1 | 0.01 | 32 | 3.64 | 14 | 1.50 |
| Տավուշ | 25 | 13.12 | 9 | 1.16 | 56 | 3.05 | 62 | 5.14 | 154 | 45.33 | 10 | 2.54 | 64 | 8.54 | 29 | 8.02 |
| Ընդամենը | 491 | 611.28 | 93 | 49.46 | 789 | 37.64 | 720 | 37.71 | 4794 | 3743.07 | 58 | 20.96 | 2238 | 207.11 | 489 | 121.47 |

Ստորև ներկայացվում է 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

| | Ուղղակի վաճառք | | | | | | | | Վաճառք աճուրդով | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | Արդյունա-բերական օբյեկտների հողեր | | Ընդամենը | | | | Արդյունա-բերական օբյեկտների հողեր | | Ընդամենը | | Արդյունա-բերական օբյեկտների հողեր | | Ընդամենը | | | |
| | | | | | | | | | | | | | | | բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի | | | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 294 | 7.92 | 23 | 0.79 | 139 | 2.83 | 132 | 4.30 | 117 | 7.54 | 0 | 0.00 | 1 | 0.80 | 28 | 2.10 | 88 | 4.64 |
| Արագածոտն | 3 | 0.20 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 3 | 0.20 | 121 | 61.74 | 68 | 56.76 | 5 | 0.38 | 8 | 0.90 | 40 | 3.70 |
| Արարատ | 11 | 1.05 | 1 | 1.00 | 1 | 0.01 | 9 | 0.04 | 293 | 177.79 | 68 | 148.96 | 8 | 18.80 | 170 | 8.33 | 47 | 1.70 |
| Արմավիր | 15 | 0.48 | 0 | 0.00 | 3 | 0.07 | 12 | 0.41 | 59 | 33.99 | 28 | 29.07 | 5 | 3.37 | 10 | 0.90 | 16 | 0.65 |
| Գեղարքունիք | 15 | 5.85 | 3 | 5.13 | 5 | 0.37 | 7 | 0.35 | 165 | 38.19 | 17 | 25.06 | 7 | 5.09 | 54 | 3.31 | 87 | 4.73 |
| Լոռի | 22 | 0.34 | 0 | 0.00 | 10 | 0.14 | 12 | 0.20 | 118 | 16.07 | 13 | 5.00 | 7 | 4.84 | 47 | 1.70 | 51 | 4.53 |
| Կոտայք | 20 | 1.36 | 0 | 0.00 | 17 | 1.27 | 3 | 0.09 | 435 | 196.82 | 146 | 183.09 | 5 | 0.64 | 174 | 10.49 | 110 | 2.60 |
| Շիրակ | 22 | 0.18 | 0 | 0.00 | 20 | 0.16 | 2 | 0.02 | 44 | 8.14 | 6 | 6.02 | 3 | 1.05 | 23 | 0.37 | 12 | 0.70 |
| Սյունիք | 7 | 0.3504 | 1 | 0.12 | 5 | 0.23 | 1 | 0.0004 | 59 | 68.95 | 25 | 60.52 | 12 | 4.63 | 7 | 0.76 | 15 | 3.04 |
| Վայոց ձոր | 4 | 0.04 | 0 | 0.00 | 2 | 0.03 | 2 | 0.01 | 84 | 53.39 | 62 | 50.41 | 3 | 1.68 | 10 | 0.64 | 9 | 0.66 |
| Տավուշ | 20 | 0.98 | 3 | 0.14 | 9 | 0.31 | 8 | 0.53 | 132 | 21.49 | 25 | 13.12 | 6 | 1.02 | 47 | 2.74 | 54 | 4.61 |
| Ընդամենը | 433 | 18.75 | 31 | 7.18 | 211 | 5.42 | 191 | 6.15 | 1627 | 684.11 | 458 | 578.01 | 62 | 42.30 | 578 | 32.24 | 529 | 31.56 |

Հանրապետությունում 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 33 գործարք (33.28 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 15.2 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 19.9 %-ով, իսկ մարզերում` աճել է 19.1 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ

աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 29.0 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 31.7 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 5.4 %-ով, արդյունաբերական նշանակության հողերի նկատմամբ աճել է 12.7 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակ | Մակերես (հա) | պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (հա) | շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազա-գույն | Առավելա-գույն | Միջին | | | Նվազագույն | Առավելա-գույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 48 | 35.60 | 36.8 | 2517.5 | 263.0 | 324 | 142.61 | 365.0 | 12000.0 | 3588.2 |
| Ապարան | 1 | 0.11 | 2065.9 | 2065.9 | 2065.9 | 18 | 14.39 | 86.5 | 2727.3 | 697.8 |
| Թալին | 19 | 21.05 | 38.2 | 261.5 | 142.3 | 67 | 85.70 | 93.6 | 5494.5 | 719.9 |
| Ծաղկահովիտ | | | | | | 49 | 104.16 | 79.5 | 1000.0 | 305.3 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 23 | 74.95 | 140.0 | 9841.6 | 4099.5 | 332 | 116.14 | 335.1 | 10833.3 | 2601.1 |
| Մասիս | 23 | 35.14 | 59.8 | 4154.9 | 817.1 | 124 | 69.74 | 200.0 | 11904.8 | 2933.9 |
| Վեդի | 22 | 38.87 | 69.0 | 565.0 | 282.3 | 257 | 147.17 | 207.0 | 10795.1 | 1813.7 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 16 | 10.54 | 60.4 | 4207.0 | 738.2 | 353 | 227.48 | 294.3 | 9090.0 | 1224.0 |
| Բաղրամյան | 8 | 11.50 | 70.8 | 315.4 | 193.2 | 109 | 446.51 | 90.6 | 2561.1 | 810.3 |
| Վաղարշապատ | 4 | 7.03 | 63.3 | 1674.9 | 643.3 | 219 | 144.33 | 444.4 | 11764.7 | 2073.4 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | 1 | 0.67 | 660.7 | 660.7 | 660.7 | 10 | 3.56 | 199.8 | 1875.0 | 431.9 |
| Ճամբարակ | 1 | 0.90 | 862.5 | 862.5 | 862.5 | 4 | 1.29 | 60.5 | 953.3 | 355.2 |
| Մարտունի | 3 | 0.15 | 128.3 | 1455.7 | 723.7 | 51 | 14.92 | 51.1 | 2850.0 | 762.2 |
| Սևան | 3 | 3.29 | 132.0 | 187.5 | 156.0 | 18 | 12.28 | 52.2 | 2134.8 | 328.5 |
| Վարդենիս | 9 | 20.06 | 60.5 | 418.0 | 297.9 | 62 | 105.03 | 41.2 | 2575.1 | 404.2 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 5 | 1.08 | 456.5 | 2480.0 | 1389.6 | 54 | 21.44 | 170.4 | 6424.2 | 584.6 |
| Գուգարք | 3 | 1.17 | 815.9 | 1017.4 | 948.3 | 153 | 64.39 | 234.6 | 6065.9 | 808.1 |
| Սպիտակ | 3 | 1.79 | 383.2 | 2553.0 | 1113.8 | 35 | 12.55 | 250.0 | 5555.5 | 716.9 |
| Ստեփանավան | 2 | 0.95 | 409.6 | 706.2 | 557.9 | 57 | 44.91 | 90.6 | 1686.6 | 345.3 |
| Տաշիր | | | | | | 964 | 803.70 | 45.3 | 1384.4 | 177.6 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 57 | 65.34 | 63.9 | 14736.8 | 1087.1 | 335 | 146.47 | 279.3 | 11942.7 | 4024.0 |
| Եղվարդ | 69 | 96.98 | 72.3 | 6921.6 | 1372.2 | 264 | 237.97 | 174.4 | 11971.8 | 2410.6 |
| Հրազդան | 20 | 20.76 | 91.5 | 1164.0 | 543.0 | 71 | 39.76 | 130.5 | 10256.4 | 1362.1 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 3 | 1.47 | 293.8 | 1724.8 | 1009.6 | 117 | 103.61 | 252.0 | 1693.1 | 636.9 |
| Ամասիա | 2 | 3.56 | 132.0 | 187.0 | 159.5 | 20 | 62.62 | 40.9 | 261.0 | 128.5 |
| Անի | 1 | 1.00 | 105.0 | 105.0 | 105.0 | 110 | 137.14 | 110.6 | 546.9 | 416.8 |
| Աշոցք | | | | | | 17 | 13.97 | 58.5 | 215.8 | 133.5 |
| Արթիկ | | | | | | 49 | 30.75 | 79.4 | 1428.6 | 452.9 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | 1 | 0.66 | 263.6 | 263.6 | 263.6 | 19 | 18.39 | 92.6 | 1023.2 | 743.4 |
| Կապան | 10 | 5.31 | 76.9 | 1298.8 | 548.1 | 11 | 6.92 | 120.0 | 841.6 | 378.3 |
| Մեղրի | 12 | 51.59 | 53.0 | 616.0 | 150.5 | 13 | 5.10 | 193.0 | 3000.0 | 746.1 |
| Սիսիան | 2 | 2.96 | 136.6 | 150.0 | 143.3 | 103 | 114.06 | 46.3 | 1977.4 | 555.4 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 40 | 24.23 | 47.3 | 1500.0 | 322.0 | 54 | 27.42 | 125.0 | 10000.0 | 1921.5 |
| Վայք | 22 | 26.18 | 41.3 | 8506.3 | 2878.0 | 42 | 8.84 | 58.8 | 1430.7 | 647.3 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 47 | 10.49 | 213.3 | 3783.8 | 695.6 |
| Իջևան | 16 | 9.17 | 154.0 | 2400.0 | 1300.5 | 51 | 16.29 | 267.5 | 9454.5 | 1281.7 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Նոյեմբերյան | 9 | 3.95 | 162.9 | 2301.2 | 1185.3 | 56 | 18.54 | 46.7 | 7368.4 | 935.9 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 մ□ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակ | Մակերես (մ□) | պայմանագրային գները 1000.0 մ□ մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (մ□) | շուկայական գները 1000.0 մ□ մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազա-գույն | Առավել ագույն | Միջի ն | | | Նվազա-գույն | Առավել ագույն | Միջի ն |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 4 | 778.6 | 2320.7 | 6150.0 | 4233.3 | 162 | 156509.1 | 130.7 | 22200.0 | 2582.9 |
| Ապարան | | | | | | 20 | 24987.0 | 124.1 | 609.6 | 390.4 |
| Թալին | 4 | 8225.0 | 51.6 | 712.8 | 162.1 | 13 | 22428.0 | 63.2 | 1454.8 | 152.5 |
| Ծաղկահովիտ | | | | | | 6 | 20403.0 | 60.0 | 214.3 | 92.8 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 16 | 18287.6 | 166.9 | 3833.3 | 894.8 | 107 | 111601.7 | 173.9 | 7140.3 | 902.9 |
| Մասիս | 138 | 54243.4 | 149.5 | 7860.0 | 2864.0 | 193 | 135815.1 | 187.5 | 25000.0 | 1222.4 |
| Վեդի | 16 | 10757.0 | 97.2 | 2941.2 | 1074.8 | 81 | 88937.4 | 126.1 | 5000.0 | 663.6 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 2 | 4063.0 | 359.7 | 2200.0 | 1279.9 | 136 | 144718.7 | 131.6 | 9090.9 | 1215.2 |
| Բաղրամյան | 2 | 1770.0 | 233.1 | 233.5 | 233.3 | 15 | 19498.6 | 100.0 | 833.3 | 240.0 |
| Վաղարշապատ | 6 | 3160.7 | 157.4 | 2047.5 | 966.8 | 237 | 217860.0 | 197.4 | 26528.4 | 1531.8 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | 3 | 1368.2 | 110.0 | 193.1 | 164.4 | 24 | 26363.7 | 186.6 | 1084.3 | 684.1 |
| Ճամբարակ | 2 | 2530.7 | 84.5 | 293.3 | 188.9 | 5 | 1209.0 | 71.3 | 2286.2 | 148.1 |
| Մարտունի | 24 | 18223.2 | 112.6 | 666.7 | 230.5 | 78 | 93092.0 | 119.3 | 5000.0 | 287.5 |
| Սևան | 5 | 1903.7 | 372.6 | 776.3 | 417.5 | 16 | 20282.4 | 240.0 | 3110.4 | 325.0 |
| Վարդենիս | 20 | 9028.1 | 66.0 | 770.0 | 347.7 | 13 | 25423.8 | 72.5 | 987.2 | 150.0 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 20 | 12094.1 | 234.1 | 1725.0 | 1305.2 | 16 | 19911.2 | 114.3 | 1388.9 | 217.2 |
| Գուգարք | 18 | 1423.5 | 2009.7 | 5203.3 | 2677.2 | 37 | 26283.8 | 77.9 | 14083.3 | 1262.8 |
| Սպիտակ | 6 | 3393.7 | 157.3 | 929.5 | 538.2 | 15 | 21898.5 | 104.9 | 1348.3 | 207.0 |
| Ստեփանավան | | | | | | 15 | 15497.9 | 88.2 | 1666.7 | 175.5 |
| Տաշիր | 3 | 135.4 | 351.5 | 360.7 | 355.0 | 2 | 2369.7 | 45.3 | 400.0 | 90.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 138 | 78799.4 | 310.0 | 6297.3 | 2930.2 | 263 | 208941.1 | 264.5 | 35353.5 | 2028.6 |
| Եղվարդ | 34 | 24783.2 | 534.6 | 4588.4 | 2644.7 | 222 | 186209.9 | 173.6 | 27000.0 | 2877.1 |
| Հրազդան | 2 | 1290.0 | 1428.3 | 2105.4 | 1766.9 | 27 | 34106.0 | 117.7 | 34848.5 | 1321.3 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 17 | 3339.8 | 574.3 | 7692.3 | 4417.1 | 54 | 50353.9 | 113.6 | 18750.0 | 335.2 |
| Ամասիա | | | | | | 1 | 1460.0 | 45.3 | 274.7 | 71.3 |
| Անի | 2 | 72.0 | 582.2 | 594.7 | 588.4 | 8 | 19158.6 | 67.9 | 180.6 | 182.8 |
| Աշոցք | | | | | | 1 | 2400.0 | 40.8 | 144.0 | 64.9 |
| Արթիկ | 4 | 278.0 | 160.0 | 4333.3 | 1628.6 | 37 | 41268.8 | 111.8 | 5000.0 | 218.1 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | 1 | 778.0 | 425.3 | 425.3 | 425.3 | 13 | 14811.0 | 112.2 | 1700.0 | 368.0 |
| Կապան | 5 | 6658.2 | 103.7 | 120.0 | 108.3 | 11 | 4613.9 | 67.9 | 2638.9 | 317.1 |
| Մեղրի | 1 | 175.4 | 107.2 | 107.2 | 107.2 | 8 | 4464.0 | 68.5 | 632.9 | 225.2 |
| Սիսիան | | | | | | 8 | 14569.0 | 123.5 | 875.0 | 222.8 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 3 | 1874.1 | 246.3 | 246.7 | 246.5 | 28 | 32379.3 | 96.7 | 7659.6 | 509.5 |
| Վայք | 7 | 4487.8 | 850.5 | 860.0 | 853.6 | 4 | 4065.5 | 120.7 | 1448.3 | 237.7 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բերդ | 1 | 135.5 | 1107.0 | 1107.0 | 1107.0 | 2 | 2875.0 | 75.8 | 810.0 | 121.5 |
| Իջևան | 38 | 25463.5 | 73.2 | 3000.0 | 1797.3 | 55 | 75205.2 | 74.1 | 14423.1 | 537.3 |
| Նոյեմբերյան | 8 | 1787.3 | 159.4 | 5510.2 | 1815.2 | 7 | 7349.0 | 125.0 | 1948.1 | 232.2 |

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6111 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.9 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 76.1 %-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 3.4 %-ով:

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 423 բնակարանի, 727 անհատական բնակելի տան, 2608 հասարակական, 599 արտադրական նշանակության օբյեկտի, 1657 միավոր (6386.03 հա) հողի, 91 ավտոտնակի և 6 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 51 վարձակալության գործարքների քանակը 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 59.5 %-ով:

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 6386.03 հա հողերից 28.07 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 6357.95 հա հողերի 4212.70 հա գյուղատնտեսական նշանակության, 1501.56 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 122.18 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 2577.60 հա, որից 811.63 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 18477 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.9 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 10.3 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (52.5 %), առանձնատների (24.4 %). հասարակական նշանակության օբյեկտների (10.6 %) և հողերի (7.1 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 10245 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2013 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ աճել է 10.3 %-ով:

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել է 1874.28 հա մակերեսով հող, որից 70.63 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 90.4 %-ը կամ 1694.04 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.77 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 609.03 հա, որից 605.60 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 1454 գործարք, որից 955-ը՝ Երևանում: 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 6.8 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 0.8 %-ով, իսկ մարզերում՝ 20.5 %-ով:

2014 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 16446 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 5.0 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 10.6 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում(22.8 %):

**ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**